

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<b>Հաշվեքննության հիմքը</b>	ՀՀ հաշվեքննիչ պալատի հունիսի 25-ի թիվ 4/10 որոշում:
<b>Հաշվեքննության օբյեկտը</b>	ՀՀ առողջապահության նախարարություն:
<b>Հաշվեքննության առարկան</b>	Դեղերի շրջանառության պետական կարգավորմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն:
<b>Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը</b>	2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
<b>Հաշվեքննության կատարման ժամկետը</b>	2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
<b>Հաշվեքննության մեթոդաբանությունը</b>	Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացակարգերը՝ հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ:
<b>Հաշվեքննության ծավալը</b>	Ընտրանքային կարգով հաշվեքննություն է իրականացվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2018 թվականին կենտրոնացված կարգով ձեռքբերված դեղերի, պատվաստանյութերի նկատմամբ, ինչպես նաև իրականացվել է ՀՀ ներկրվող դեղերի վերլուծություն:
<b>Հաշվեքննության նպատակը</b>	Հաշվեքննության նպատակն է՝ գնահատել Նախարարության կողմից ձեռք բերված դեղերի գնումների պլանի կազմման և դեղերի քանակի որոշման, դրանց հաշվառման, բաշխման գործընթացների արդյունավետությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ՀՀ ներմուծվող դեղերի հարցերը:
<b>Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում</b>	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիրուխյանը:

## I. ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ առողջապահության նախարարության կողմից, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ձեռք բերված դեղերի գնումների պլանի կազմման և դեղերի քանակի որոշման, դրանց հաշվառման, բաշխման գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ՀՀ ներմուծվող դեղերի հարցերը:

### *Հաշվեքննողի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք դեղերի գնումների գործընթացի՝ օրենքներին ու իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ դեղերի գնումների գործընթացի իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից և խեղաթյուրումներից:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքի հիմնավորման համար:

### *Ոչ լիարժեք եզրահանգման հիմք*

Հաշվեքննությամբ պարզվել է, որ՝

- Գնումների պլանով նախատեսվել և ձեռք են բերվել համապատասխան առողջապահական ոլորտի գլխավոր մասնագետի կողմից առաջարկված պահանջարկից ավելի դեղերի չափաքանակներ:
- ՀՀ պետական բյուջեի նախահաշվով նախատեսվել և գնումների գործընթացով ձեռք են բերվել դեղեր և լաբորատոր նյութեր (թեստ-երիզներ), որի պահանջարկը չի ձևավորվել համապատասխան առողջապահական ոլորտի գլխավոր մասնագետի կողմից ներկայացված հայտով:
- Նախարարության կողմից չի ապահովվել ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի պահանջների կատարումը՝ հանգեցնելով կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի մասով ներկայացվող պահանջարկի,

գնումների պլանով նախատեսված և փաստացի ծախսված քանակների միջև շեղումների առաջացմանը:

- Որոշ դեպքերում ներմուծող ընկերությունները և ֆիզիկական անձինք ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծել են դեղորայք, սակայն տեղեկատվություն չեն ներկայացրել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և համապատասխան սահմանված փորձաքննություններ չեն անցել:
- Դեղերի դրոշմապիտակների բազան համադրելով «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ներմուծված դեղերի բազայի հետ ի հայտ են եկել տարբերություններ՝ ներմուծված դեղերի քանակների և տեսակների հետ կապված:

### ***Ոչ լիարժեք եզրահանգում***

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության՝ դեղերի ձեռք բերման գործընթացը, բոլոր էական առումներով, համապատասխանում է ոլորտը կարգավորող իրավական ակտերին:

Դավիթ Չիբուխչյան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

24 սեպտեմբեր 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

## II. ԴԵՂՈՐԱՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՀԻՎԱՆՊԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳԵՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

### 1. Ընդհանուր մաս

Նախարարությունը «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրի (հետայսու՝ Ծրագիր) շրջանակներում հիվանդների դեղապահովումն իրականացնում է՝ համաձայն ՀՀ կառավարության 23.11.2006թ. «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 1717-Ն և ՀՀ կառավարության 02.05.2013թ. «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշումների:

Հաշվեքննության ընթացքում ընտրանքային կարգով ուսումնասիրվել են Նախարարության կողմից ձեռք բերված դեղերի գնումների պլանի կազմման և դեղերի քանակի որոշման, դրանց ծախսման, հաշվառման, բաշխման գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին և ՀՀ ներմուծվող դեղերի հարցերը:

2018 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան նախահաշվով, ծախսերը պլանավորվել են 2,600,003.0 հազ. դրամ: Տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 2,112,790.0 հազ. դրամ կամ պետական բյուջեով նախատեսվածի 81.3%: Տարբերությունը՝ 487,213.0 հազ. դրամ, ՀՀ կառավարության որոշումներով պակասեցվել է ծրագրային գումարից: 2018թ. համար փաստացի ֆինանսավորումը կազմել է 2,111,129.07 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 2,109,352.7 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 2,170,080.07 հազ. դրամ:

Նախարարության կողմից կենտրոնացված կարգով դեղերի գնումներն իրականացվում են հաստատված գնումների պլանի հիման վրա, որը կազմվում է ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի համաձայն: Դեղերի պահանջարկի հաշվարկման համար ելակետային ցուցանիշ է համարվում՝ Նախարարության գլխավոր մասնագետների՝ ըստ առողջապահության համապատասխան ոլորտների, մասնագիտացված բժշկական կազմակերպությունների և դիսպանսերների (հետայսու՝ Գլխավոր մասնագետ) կողմից ներկայացված հայտերը և եզրակացությունները, որոնցում նշվում է համապատասխան հիվանդություններով հաշվառված հիվանդների թիվը, տարվա համար (12 ամիս) անհրաժեշտ դեղերի քանակը, ՀՀ մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքով ներկայացված հաշվետվությունները՝ ըստ առկա մնացորդների, դեղերի

ծախսի, հիվանդների թվի և Նախարարության, մասնագիտացված բժշկական կազմակերպությունների, դիսպանսերների անունով, որպես մարդասիրական օգնություն ստացված դեղերի կամ համարժեք փոխարինող դեղերի քանակային մնացորդները: Դեղերի անվանացանկը կազմելիս առաջնահերթությունը տրվում է այն դեղերին, որոնք ըստ հիվանդությունների ընդգրկված են բոլոր բուժման սխեմաներում՝ կախված հիվանդության տեսակից և ընթացքից:

## 2. Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ

Ըստ առանձին ուղղությունների իրականացված հաշվեքննության արդյունքները ներկայացված են ստորև:

➤ **«Ապետական բյուջեով նախատեսված դեղերի, Գլխավոր մասնագետների պահանջարկի և գնումների պլանով հաստատված դեղերի քանակների, գումարների տարբերության ազդեցությունը նախահաշվի պլանավորման վրա: (Հավելված 1):**

2018թ. «Ապետական բյուջեի նախահաշվով՝ նախատեսված դեղերի քանակները ներկայացվել է պահանջարկից ավելի, որի արդյունքում մեծ գումար է նախատեսվել Ծրագրի նախահաշվում:

2018 թվականի «Ապետական բյուջեի նախահաշվով նախատեսվել է 2,600,002.6 հազ. դրամի դեղերի ձեռքբերում: Նախահաշվով նախատեսված դեղերի 25 չափաքանակներ՝ 22.03.2018 թվականի թիվ 22 գրությամբ սահմանված՝ «դեղորայքի ձեռք բերման գնման» հայտի, նվազեցվել են 20-ից 60%-ի սահմաններում, իսկ դեղերի 18 չափաքանակ տարեվերջին ավելացվել է 10%-ի չափով: Արդյունքում, տարվա գնումների պլանը սահմանվել է՝ 2,111,172.2 հազ. դրամ: Մասնագետի կողմից առաջարկված պահանջարկից ավելի դեղերի չափաքանակներ: Այսպես.

- *Ինսուլին միջին ազդեցության 10մլ* դեղի համար տարեկան պահանջարկը, Գլխավոր մասնագետի կողմից հիմնավորված, կազմել է 130,000 սրվակ: Նախահաշվով նախատեսվել և գնումների պլանով ձեռք է բերվել 160,000 հատ, կամ 30,000 սրվակ ավելի պահանջարկից՝ **57,870.0** հազ. դրամ արժեքով:

- *Ինսուլին կարճատև ազդեցության 10մլ* դեղի համար տարեկան պահանջարկը, Գլխավոր մասնագետի կողմից հիմնավորված, կազմել է 61,600 սրվակ: Նախահաշվով նախատեսվել և գնումների պլանով ձեռք է բերվել 65,000 հատ, կամ 3,400 սրվակ ավելի պահանջարկից՝ **6,558.6** հազ. դրամ արժեքով:

- *Էպոեֆին բերա 2000ՄՄ* դեղի համար տարեկան պահանջարկը, Գլխավոր մասնագետի կողմից հիմնավորված, կազմել է 71,400 սրվակ: Նախահաշվով նախատեսվել է 89,000 սրվակ, իսկ գնումների պլանով ձեռք է բերվել 72,000 սրվակ, կամ 600 սրվակով ավելի պահանջարկից՝ **2,909.9** հազ. դրամ արժեքով:

- *Լորոզեպամ 2մգ* դեղի պահանջարկը կազմել է 883,728 դեղահատ: Նախահաշվով նախատեսվել է 1,500,000 դեղահատ, սակայն գնումների պլանով գնվել է 1,100,000 հատ կամ 216.272 դեղահատով ավելի պահանջարկից՝ **2,768.3** հազ. դրամ արժեքով:

- *Տրիհեքսիֆենիդիլ 2մլ./Յիկլադոլ/* դեղի համար տարեկան պահանջարկը, Գլխավոր մասնագետի կողմից հիմնավորված, կազմել է 940,000 դեղահատ: Նախահաշվով նախատեսվել է 1,900,000 հատ, իսկ գնումների պլանով ձեռք է բերվել 1,575,200 հատ, կամ 635.200 դեղահատով ավելի պահանջարկից՝ **2,794.9** հազ. դրամ արժեքով:

- *Դիազեպամ 5մլ.* դեղի համար տարեկան պահանջարկը կազմել է 961,848 դեղահատ: Նախահաշվով նախատեսվել է 1,500,000, իսկ գնումների պլանով ձեռք է բերվել 1,296,000 հատ, կամ 334.152 դեղահատով ավելի պահանջարկից՝ **2,138.6** հազ. դրամ արժեքով և այլն:

---

**Արդյունքում, գլխավոր մասնագետի կողմից պահանջված դեղերի չափաքանակների ավելացումները հանգեցրել են 79,810.7 հազ. դրամի դեղերի ավելի գնմանը:**

---

### **Հաշվերնության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

Դեղերի պլանավորումը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014 թվականի 837-Ա հրամանի պահանջները, մասնավորապես՝ 4-րդ կետով սահմանված է, որ դեղերի գնումների պլանի կազմման աշխատանքների համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում անվճար և (կամ) արտոնյալ պայմաններով դեղերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքով ներկայացված հաշվետվությունները՝ ըստ հիվանդությունների, հաշվառված հիվանդների թվի, դեղերի ծախսի, առկա մնացորդների վերաբերյալ: Ինչպես նաև նախարարության դեղերի անվանացանկը կազմելիս հաշվի են առնվում առողջապահության նախարարության, մասնագիտացված բժշկական կազմակերպությունների, դիսպանսերների անունով որպես մարդասիրական օգնություն ստացված դեղերի կամ համարժեք փոխարինող դեղերի առկա քանակային մնացորդները, դրանց պիտանիության ժամկետները:

ՀՀ առողջապահության նախարարությունը դեղերի պլանավորումը իրականացրել է 15 ամսվա կտրվածքով, հիմք ընդունելով ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավարի 2017թ. հոկտեմբերի 27 թիվ 3103-Ա հրամանը (կից ներկայացվում է):

**Դեղերի պահանջարկի և ձեռք բերված չափաքանակների անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում են, որ՝**

1. Միջին ազդեցության ինսուլին 10մլ դեղի 2017 թվականի միջին տարեկան պահանջարկը կազմել է 130 000, որը նախատեսված է 12 ամիսների դեղապահովման համար, պլանավորումը իրականացվել է 160 000 սրվակ դեղի (հաշվի առնելով մնացորդը ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-

ում), այսինքն՝ 15 ամիսների համար՝ հիմք ընդունելով վերոգրյալ հրամանը, ինչպես նաև փարեկան ավելացող հիվանդների քանակը (փարեկան շուրջ 10%) և հաշվի առնելով դեղի կենսական անհրաժեշտությունը շաքարային դիաբետով ինսուլինոկախյալ հիվանդների համար: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ-ի ՄՕՀԿ-ում առկա մնացորդները կազմել են 41000 սրվակ, որը կազմում է 3,4 ամսվա պաշար:

2. Կարճալու ազդեցության ինսուլին 10մլ դեղի 2017 թվականի միջին փարեկան պահանջարկը կազմել է 61600, որը նախատեսված է 12 ամիսների դեղապահովման համար, պլանավորումը իրականացվել է 65000 սրվակ դեղի (հաշվի առնելով մնացորդը ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում), այսինքն՝ 15 ամիսների համար՝ հիմք ընդունելով վերոգրյալ հրամանը, ինչպես նաև փարեկան ավելացող հիվանդների քանակը (փարեկան շուրջ 10%) և հաշվի առնելով դեղի կենսական անհրաժեշտությունը շաքարային դիաբետով ինսուլինոկախյալ հիվանդների համար: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ-ի պահեստում առկա մնացորդները կազմել է 15 918 սրվակ, որը կազմում է 3 ամսվա պաշար:

3. Էպոեդին բերա դեղի 2017 թվականի միջին փարեկան պահանջարկը կազմել է 71400, որը նախատեսված է 12 ամիսների դեղապահովման համար, պլանավորումը իրականացվել է 72000 սրվակ դեղի (հաշվի առնելով մնացորդը պահեստում), այսինքն 15 ամիսների համար՝ հիմք ընդունելով վերոգրյալ հրամանը, ինչպես նաև փարեկան ավելացող հիվանդների քանակը և հաշվի առնելով դեղի կենսական անհրաժեշտությունը քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպարվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզի դեպքերում) ունեցող հիվանդների համար: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում առկա մնացորդները կազմել են 5500 սրվակ, որը կազմում է 1 ամսվա պաշար:

4. Լորազեպամ 2 մգ դեղի մնացորդը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում 196 872 դեղահատ, միջին փարեկան ծախսը 2017թ-ին՝ 1 100 000 դեղահատ, նախատեսվել է ձեռք բերել 1 500 000 դեղահատ 15 ամսվա համար, սակայն ձեռք է բերվել 1 100 000 դեղահատ հաշվի առնելով առկա մնացորդները: ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում առկա մնացորդները կազմում է 2,1 ամսվա պաշար:

5. Ցիկլոպրոլ 2 մգ դեղի մնացորդը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում 352 272 դեղահատ, միջին փարեկան ծախսը 2017թ-ին՝ 1 757 000 դեղահատ, նախատեսվել է ձեռք բերել 1 900 000 դեղահատ 15 ամսվա համար, սակայն ձեռք է բերվել 1 575 200 դեղահատ հաշվի առնելով առկա մնացորդները: ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում առկա մնացորդները կազմում է 2,4 ամսվա պաշար:

6. Դիազեպամ 5 մգ դեղի մնացորդը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՀՀ ՄՕՀԿ-ում 207 624 դեղահատ, միջին փարեկան ծախսը 2017թ-ին՝ 1 301 546 դեղահատ, նախատեսվել է ձեռք բերել 1 500 000 դեղահատ 15 ամսվա համար, սակայն ձեռք է բերվել 1 296 000 դեղահատ հաշվի առնելով առկա մնացորդները: ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-ում առկա մնացորդները կազմում է 1,9 ամսվա պաշար:

➤ ՀՀ պետական բյուջեի նախահաշվով նախատեսվել և գնումների գործընթացով ձեռք են բերել դեղեր և լաբորատոր նյութեր (թեստ-երիզներ), որի պահանջարկը չի ձևավորվել համապատասխան Գլխավոր մասնագետի կողմից ներկայացված հայտով:

Այսպես.

- թմրադեղերի (մորֆին, պապավերին, թրիմեպերիդին, մեթադոն) համար գլխավոր մասնագետի կողմից պահանջ չի ներկայացվել, սակայն ներառվել է նախահաշիվ և գնվել

55,468.3 հազ. դրամ ընդհանուր գումարով, տուբերկուլինը՝ 22,750.0 հազ. դրամով, իսկ թեստ-երիզները՝ 44,960.8 հազ. դրամով: Նախահաշվով նախատեսված 13 անվանում դեղերը (իզոնիախիդ, էթամբուտոլ, պիրաինամիդ, ռիֆամպիցին և այլն) 24,735.3 հազ. դրամ ընդհանուր գումարով Նախարարության կողմից կազմակերպված գնումների ընթացակարգերով չեն գնվել:

**Նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի պահանջակի պլանավորումն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի 2-րդ և 3-րդ կետի պահանջների ոչ ամբողջական կիրառմամբ**

Այսպիսով, Նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի պահանջակի պլանավորումն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի 2-րդ և 3-րդ կետի պահանջների ոչ ամբողջական կիրառմամբ, համաձայն որի «դեղերի տարեկան պահանջարկի պլանավորման նպատակով գնումների պլանի կազմման աշխատանքները իրականացնելիս

Նախարարությունը հարցումներ է կատարում Նախարարության գլխավոր մասնագետներին՝ ըստ համապատասխան ոլորտների, մասնագիտացված բժշկական կազմակերպությունների և դիսպանսերների, որոնց կողմից ներկայացված հայտերում և եզրակացություններում ներկայացվում են համապատասխան հիվանդություններով հաշվառված հիվանդների թիվը և տարվա համար (12 ամիս) անհրաժեշտ դեղերի քանակը նշելով անվանումները, դեղաչափը, չափման միավորը» և չի բխել բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման պահանջից:

**Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

Թմրադեղերի (մորֆին, պապավերին, թրիմեպերիդին) ձեռք բերումը իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014 թվականի 837-Ա հրամանի պահանջների, մասնավորապես՝ 4-րդ կետով սահմանված է, որ դեղերի գնումների պլանի կազմման աշխատանքների համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում անվճար և (կամ) արտոնյալ պայմաններով դեղերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքով ներկայացված հաշվետվությունները՝ ըստ հիվանդությունների, հաշվառված հիվանդների թվի, դեղերի ծախսի, առկա մնացորդների: Մեթադոն դեղի պահանջարկը ներկայացրած բժշկական հաստատության գրությունը կցվում է:

**➤ *Կենտրոնացված կարգով դեղերի ձեռքբերման նպատակով Նախարարության կողմից գնումների գործընթացի կազմակերպում.***

2018 թվականի համար Նախարարության կողմից կենտրոնացված կարգով դեղերի ձեռք բերման նպատակով ՀՀ պետական բյուջեի նախահաշվով նախատեսվել է 2,600,003.0 հազ. դրամ: Ընդ որում, հաստատված դեղերի 59 չափաբաժիններից 52-ը պետք է գնվեր «բաց մրցույթով» (ԲՄ) գնումներ կատարելու արդյունքում, իսկ 7

չափաբաժինը՝ «մեկ անձից» (ՄԱ) գնում կատարելու ընթացակարգով, որը ՀՀ կառավարության որոշումներով հաստատված և Նախարարության կողմից արտարժույթով կնքված երկարաժամկետ պայմանագրերով մատակարարումներն են (հակադիաբետիկ դեղեր):

### 5 չափաբաժին դեղեր և պարագաներ մրցույթի չեն դրվել

Գնումների գործընթացը սկսվել է 03.11.2017 թվականին՝ ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 ծածկագրով «բաց մրցույթի» հայտարարությամբ, որին արձագանքել է 11 կազմակերպություն:

Նախահաշվով նախատեսված 52 չափաբաժնից մրցույթի է ներկայացվել 47-ը: 5 չափաբաժին դեղեր և պարագաներ (**ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հայտնաբերման թեստերիզներ, իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստեր, մեթադոն 5մգ, 10մգ, 40մգ**) մրցույթի չեն դրվել: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացման և գնահատման արդյունքում գնման ընթացակարգի հաղթողներ են ճանաչվել 27 չափաբաժին դեղերի համար կամ նախատեսված դեղերի 51.9%, իսկ 20 չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած: 27.03.2018 թվականին հաղթող մասնակիցների հետ կնքվել են պայմանագրեր՝ 897,866.9 հազ. դրամ գումարով, իսկ ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 25.12.2018 թվականը: Մրցույթի գործընթացի տևողությունը կազմել 144 օր, որի հետևանքով մնացած դեղերի գնումները երկարաձգվել են: Կնքվել է համապատասխան պայմանագրեր՝ նախահաշվով նախատեսված դեղերի քանակների համար:

### Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում

Դեղերի գնման ընթացակարգի ամփոփման երկարատև գործընթացը պայմանավորված է ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի հայտի գնահատմամբ (վերջինս հանդիսանում էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից): Մասնավորապես, «ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ» ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել էր արտարժույթով և պայմանագիրը նույնպես պետք էր կնքվել արտարժույթով: Սակայն, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանման, «ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ» ընկերությունը հետ պայմանագիր կնքելիս անհրաժեշտ է սահմանել ՀՀ դրամով առավելագույն պայմանագրային գին՝ հայտերի բացման օրվա դրությամբ ԿԲ-ի կողմից սահմանված կուրսով: «ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ» ընկերությունը համաձայն չէր կնքել պայմանագիր՝ ֆիքսելով դրամով պայմանագրային գին, ինչի հետևանքով հայտը մերժվել է և հաղթող է ճանաչվել հաջորդ, երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցը, որից պահանջվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթեր: Այդ իսկ պատճառով երկարաձգվել է գործընթացը:

22.03.2018թ. թիվ 22.2/388582-18 «2018թ. դեղորայքի ձեռքբերման գնման հայտ»-ով, նախահաշվով նախատեսված 25 չափաբաժին դեղերի քանակները նվազեցվել են 20-ից 60%-ի սահմաններում՝ պատճառաբանելով, որ նախահաշվով նախատեսված

քանակների հաշվարկը իրականացվել է 15 ամսվա կտրվածքով: Արդյունքում համաձայնագրերով նվազեցվել է արդեն կնքված և գործող պայմանագրային քանակները:

Հաջորդ գնումների գործընթացը սկսվել է 16.12.2017 թվականին՝ ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/11 ծածկագրով թմրադեղերի (մեթադոն) համար «բաց մրցույթի» հայտարարությամբ, որին արձագանքել է 1 կազմակերպություն: Նախահաշվով նախատեսված մնացորդային 25 չափաբաժնից մրցույթի է ներկայացվել 3-ը: 25.04.2018 թվականին հաղթող մասնակցի հետ կնքվել են պայմանագրեր՝ 34,156.0 հազ. դրամ գումարով, իսկ ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվելով 25.12.2018 թվականը:

Երրորդ գործընթացը սկսվել է 17.04.2018 թվականին՝ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/23 ծածկագրով «գնանշման հարցում» ընթացակարգով գնումներ կատարելու համար պարբերական մրցույթի հայտարարությամբ, որին արձագանքել է 6 կազմակերպություն: Նախահաշվով նախատեսված մնացորդային 22 չափաբաժնից մրցույթի է ներկայացվել 17-ը: 5 չափաբաժին դեղեր և պարագաներ (**ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հայտնաբերման թեստերիզներ, իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստեր, գլյուկոմետրի թեստ-երիզներ, ասպարագինազ 1000Մ, ցիտարբին**) մրցույթի չի դրվել: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացման և գնահատման արդյունքում գնման ընթացակարգի հաղթողներ են ճանաչվել 2 չափաբաժին դեղերի համար, իսկ 15 չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած: 25.05.2018 թվականին հաղթող մասնակիցների հետ կնքվել են պայմանագրեր՝ 26,509.0 հազ. դրամ գումարով, իսկ ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվելով 25.12.2018 թվականը:

Վերթական գնումների գործընթացը սկսվել է 22.06.2018 թվականին՝ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/33 ծածկագրով «գնանշման հարցում» ընթացակարգով գնումներ կատարելու համար մրցույթի հայտարարությամբ, որին արձագանքել է 7 կազմակերպություն: Նախահաշվով նախատեսված մնացորդային 20 չափաբաժնից մրցույթի է ներկայացվել 8-ը: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացման և գնահատման արդյունքում գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել 5 չափաբաժին դեղի համար, իսկ 3 չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած: 30.07.2018 թվականին հաղթող մասնակցի հետ կնքվել է պայմանագիր՝ 47,441.2 հազ. դրամ գումարով, իսկ ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվելով 25.12.2017 թվականը:

2018 թվականի համար դեղերի ձեռքբերման վերջին գործընթացը՝ 16.11.2018թ. ՀՀ Ֆինանսների նախարարություն ուղղված՝ 18 անվանում դեղերի չափաքանակների մինչև 10% ավելացման անհրաժեշտության մասին գրությունն է՝ 25,362.5 հազ. դրամ ընդհանուր գումարով:

**Արդյունքում, նախահաշվով նախատեսված մնացորդային 13 չափաբաժին դեղերը՝ (ցիտարբին, L-ասպարագինազ-5000 և 10000,**

**իզոնիաիդ, էթամբուտոլ, իզոնիազիդ, պիրազինամիդ, ռիֆամպիցին և այլն) 24,735.3 հազ. դրամ գումարով Նախարարության կողմից կազմակերպված գնումների ընթացակարգերով չեն գնվել:**

Ընդ որում, Նախարարության կողմից կազմակերպված մրցույթներում որոշ դեղեր պարբերաբար չեն ընդգրկվել գնումների գործընթացում:

**Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

**Հակաբուբերկուլյոզային դեղեր՝ էթամբուտոլ, իզոնիազիդ, ռիֆամպիցին, պիրազինամիդ և այլ հակաբուբերկուլյոզային դեղերը ձեռք են բերվել «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, վերջինիս դրամաշնորհ հարկացնելու միջոցով, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 489-Ն որոշումը:**

➤ **Պլանի կազմման ընթացքում առողջապահության ոլորտների գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի ձևավորումը (հավելված 2)**

**Գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկը հաշվարկներով հիմնավորված չէ և հիվանդների թվի տարանջատումներին համարժեք չի փոփոխվում: Ընդ որում, մեծամասամբ գնվող դեղերի քանակները՝ հիվանդների թվի համեմատ, աճել են առաջանցիկ տեմպերով:**

Օրինակ՝

- *Մետֆորմին 500 մգ* դեղի պահանջարկը 2017-2018 թվականներին ներկայացվել է համապատասխանաբար՝ 21.000.000 և 26.400.000 հատ, իսկ հիվանդների թիվը՝ 68.000 և 71.660 մարդ, կամ 5.4 %-ով հիվանդների թվի աճի պարագայում մեկ հիվանդի հաշվով դեղի ներկայացված պահանջարկն աճել է 19.3 %-ով:

- *Գլխմեպիրիդ 2մգ/500 մգ* դեղի պահանջարկը 2017-2018 թվականներին ներկայացվել է համապատասխանաբար՝ 18.000.000 և 12.300.000 հատ, հիվանդների թիվը՝ 68.000 և 71.660 մարդ, կամ 5.4 %-ով հիվանդների թվի աճի պարագայում մեկ հիվանդի հաշվով դեղի ներկայացված պահանջարկը նվազել է 35.2 %-ով:

- *Ինսուլին մարդու իզոֆան ներարկման լուծույթ 100 ՄՄ/մլ* դեղի մասով 2017 թվականին ներկայացվել է 49.400 հատի, 2018 թվականին՝ 52.250 հատի պահանջարկ, համապատասխանաբար՝ 894 և 866 հիվանդների համար: Արդյունքում, մեկ հիվանդի հաշվով միջին տարեկան պահանջարկը 2017 թվականին կազմել է 55.3 հատ, 2018

թվականին հիվանդների թվի 3.2 %-ով նվազման պարագայում պահանջարկն աճել է 9.0 %-ով և մեկ հիվանդի հաշվով կազմել է 60.3 հատ:

- *Ինսուլին լիզպրո ներարկման լուծույթ 100 ՄՄ/մլ* դեղի մասով 2017 թվականին ներկայացվել է 32.400 հատի, 2018 թվականին՝ 54.250 հատի պահանջարկ, համապատասխանաբար՝ 894 և 866 հիվանդների համար: Արդյունքում, մեկ հիվանդի հաշվով միջին տարեկան պահանջարկը 2017 թվականին կազմել է 36.2 հատ: 2018 թվականին հիվանդների թվի 3.2 %-ով նվազման պարագայում պահանջարկն աճել է 73.0 %-ով և մեկ հիվանդի հաշվով կազմել է 62.6 հատ և այլն:

### **Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

#### ***Ինսուլինային անալոգներ***

2017 թվականին 0-22 տարեկան տարիքային խմբում հաշվառված հիվանդների թիվը կազմել է 808 հիվանդ, պահանջարկը կազմել է ինսուլին լիզպրո դեղի համար 32 400 և ինսուլին իզոֆանի համար՝ 32 400 քարտրիջ, սակայն գրությունում 2017 թվականի համար նշված է 894 հիվանդ, իսկ պահանջարկը *Ինսուլին լիզպրո դեղի համար 32 400* և ինսուլին իզոֆանի համար՝ 49 400 քարտրիջ:

2018թ 0-22 տարեկան տարիքային խմբում հաշվառված հիվանդների թիվը կազմել է 886 հիվանդ, պահանջարկը՝ ինսուլին գլարգին դեղի համար 37 131 քարտրիջ, ձեռք է բերվել 34 877: *Ինսուլին լիզպրո դեղի պահանջարկը 35 125*, իսկ ձեռք է բերվել 34 877: Սակայն գրությունում 2018 թվականի համար նշված է 866 հիվանդ, իսկ պահանջարկը *Ինսուլին լիզպրո դեղի համար 54 250* և ինսուլին իզոֆանի համար՝ 52 250 քարտրիջ:

➤ **Գնումների պլանի ձևավորման ընթացքում գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկի, դրանց գնման ծավալների և փաստացի ծախսերի համապատասխանությունը (հավելված 3):**

---

***Նախարարության կողմից չի ապահովվել ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի պահանջների կատարումը՝ հանգեցնելով կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի մասով ներկայացվող պահանջարկի, գնումների պլանով նախատեսված և փաստացի ծախսված քանակների միջև շեղումների առաջացմանը:***

---

Օրինակ՝

- *Ամիպրիպարիլին 25 մգ* դեղի համար տարեսկզբին ունենալով 197.935 հատ մնացորդ 2018 թվականի պահանջարկը ներկայացվել է 447.984 հատի չափով, գնվել է 500.016 հատ, իսկ տարվա փաստացի ծախսը կազմել է 472.134 հատ:

- *Էրիթրոպոէտին բերփա 2000 ՄՄ* դեղի համար տարեսկզբին ունենալով 12.071 հատ մնացորդ 2018 թվականին պահանջարկը ներկայացվել է 71.400 հատ, գնվել է 72.000 հատ, իսկ փաստացի ծախսը կազմել է 58440 հատ:
- *Հիդրոքսիկարբամիդ 500 մգ* դեղի համար տարեսկզբին ունենալով 44.730 հատ մնացորդ 2018 թվականի պահանջարկը ներկայացվել է 90.000 հատ, գնվել է 65.000 հատ, փաստացի ծախսը կազմել է 78.542 հատ:
- *Ցիկլոսպորին /սանդիմուն նեորալ/ 50 մգ* դեղի համար տարեսկզբին ունենալով 15.130 հատ մնացորդ՝ 2018 թվականի պահանջարկը ներկայացվել է 20.000 հատ, գնվել է 10.000 հատ, իսկ տվյալ տարվա փաստացի ծախսը կազմել է 15.820 հատ:
- *Դոքսորուբիցին 10 մգ դեղի* համար տարեսկզբին ունենալով 1078 հատ մնացորդ 2018 թվականին ներկայացվել է 2.800 հատի պահանջարկ, գնվել է նույն քանակությամբ, իսկ փաստացի ծախսը կազմել է 1.543 հատ:
- *Ինտերֆերոն ալֆա 2Ա-3ՄՄ* դեղի համար տարեսկզբին ունենալով 1.241 հատ մնացորդ՝ պահանջարկը 2018 թվականին ներկայացվել է 2.500 հատ, գնվել է 650 հատ, իսկ տարվա ծախսը կազմել է 1.275 հատ:
- *L - ասպարազինազա 10000* դեղի համար տարեսկզբին ունենալով 179 հատ մնացորդ պահանջարկը 2018 թվականին ներկայացվել է 146 հատ, գնում չի կատարվել, իսկ փաստացի ծախսը կազմել է 49 հատ:
- *L - ասպարազինազա 5000 դեղի* համար տարեսկզբին ունենալով 251 հատ մնացորդ պահանջարկը 2018 թվականին ներկայացվել է 365 հատ, գնում չի կատարվել, իսկ փաստացի ծախսը կազմել է 135 հատ:

Գրեթե նույն վիճակն արձանագրվել է նաև *Ինսուլին Ինսուլարարդ/ միջին ազդեցության մարդկային /100ՄՄ/մլ 10մլ, Ինսուլին Միքստարդ/կարճատև և միջին ազդեցության մարդկային /100ՄՄ/ մլ 10 մլ, Ինսուլին մարդու իզոֆան ներարկման լուծույթ 100 ՄՄ/մլ և այլ դեղերի մասով:*

### **Հաշվերնության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

Հաշվի առնելով, որ պետության կողմից ձեռք բերվող և կենսական նշանակություն ունեցող դեղերի մեծ մասը ՀՀ ներկրվում է այլ երկրներից, ինչպես նաև հիվանդների դեղապահովման անընդհատությունը չխախտելու նպատակով՝ ՀՀ առողջապահության նախարարությունը դեղերի պլանավորումը իրականացվել է 15 ամսվա կտրվածքով:

Միաժամանակ հաշվի է առնվում նախկին տարիների փորձը, մասնավորապես չկայացած մրցույթները և արտադրող ընկերությունների կողմից ստացված գրությունները՝ դեղերը ՀՀ չմատակարարելու կամ ընդհանրապես չարտադրելու վերաբերյալ: Այս երևույթը հանդիպում է հակաուռուցքային և արյունաբանական դեղերի ոլորտում (Դոքսորուբիցին, L-ասպարազինազա 5000, 10000 ՄՄ, ինտերֆերոն ալֆա, հիդրոքսիկարբամիդ, ցիկլոսպորին), որոնց անընդհատության խախտումը հանգեցնում է բուժական սխեմաների ընդհատմանը, որի

արդյունքում առաջանում են մի շարք բարդություններ հիվանդների մոտ: Նշենք, որ ընթացիկ տարում որոշ հիվանդությունների մասով բուժական սխեմաները կարող են ենթարկվել փոփոխության: Ընթացիկ տարում դեղերի ձեռք բերված քանակների մնացորդները հաշվի են առնվում հաջորդ տարվա պլանավորման ժամանակ:

➤ **Տվյալ տարվա գնումների ծավալների ձևավորման ընթացքում Նախարարության պահեստում և բժշկական կազմակերպություններում տարեսկզբի դրությամբ առկա դեղերի քանակների հաշվառումը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենտրոնացված կարգով գնվող դեղերի ընդհանուր ծավալում ամենաբարձր տեսակարար կշիռը պատկանում է հակադիաբետիկ դեղերին՝ 66.5%, ընտրանքային կարգով վերոնշյալ հարցի ուսումնասիրությամբ ընդգրկվել են հենց տվյալ խմբի դեղերը (**հավելված 4**):

**Տվյալ տարվա դեղերի գնման համար նախատեսված ծախսերի հաշվին գնվել են իրական պահանջարկը գերազանցող քանակությամբ դեղեր, որոնք բավարարել են նաև հաջորդ տարվա որոշակի քանակության պահանջարկը և որոնց համար պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել են միջոցներ: Արդյունքում, տարեցտարի գնված դեղերի բաշխումից հետո առաջացել են մեծաքանակ մնացորդներ:**

Այդուհանդերձ, դեղի կուտակումների վերացման նպատակով 2018 թվականին *դեղերի գնման չափաքանակների կրճատումը՝ դրական, բայց ոչ բավարար ազդեցություն են ունեցել իրավիճակի վրա: Այսպես՝*

- *Ինսուլին Գլարգին 100ՄՄ, Յմլ դեղի* , համար 2018 թվականի տարեսկզբին ունենալով 30.602 հատ մնացորդ, համաձայն պայմանագրի, գնվել է ևս 34.877 հատ: Փաստացի ծախսը կազմել է 31.781 հատ՝ տարելերջին առաջացնելով 47.315 հատ կամ 261.689.8 հազ. դրամի մնացորդ (17.8 ամիս)<sup>1</sup>:

- *Գլիկլազիդ 60 մգ/Դիաբետոն MR60 մգ դեղի* համար 2018 թվականին հաշվի չի առնվել տարեսկզբին առկա 5.184.244 հատ մնացորդը, գնվել է 12.658.200 հատ, տարվա

<sup>1</sup> Համաձայն ՀՀ ԱՆ «դեղորայքային քաղաքականության և բժշկական տեղնուլոգիաների» վարչության կողմից ներկայացված տեղեկանքի «շաքարային դիաբետի բուժման համար որպես բազալ ինսուլիններ օգտագործվում են միջին ազդեցության ինսուլիններ (հումուլին NPH) և ինսուլինի երկարատև ազդեցության անալոգներ (գլարգին): Նրանք տարբերվում են իրենց ազդեցության տևողությամբ՝ Հումուլին NPH ազդում է 8-12 ժամ և ներարկվում է օրը 2 անգամ, իսկ Գլարգինը ազդում է մինչև 24 ժամ և ներարկվում է օրը 1-2 անգամ, որը և հանդիսանում է իր առավելությունը: Վերը նշվածից պարզ է դառնում, որ այս ինսուլինները չեն կարող միաժամանակ օգտագործվել, քանի որ երկուսն էլ հանդիսանում են բազալ ինսուլիններ: Այս դեղերը օգտագործվում են նույն նպատակով և նույն շահառուների համար և չեն կարող դիտարկվել որպես տարբեր ապրանքներ, քանի որ փոխարինվել են 2017-2018թթ. մեկը մյուսով՝ իզոֆան ինսուլինը գլարգին ինսուլինով»:

փաստացի ծախսը կազմել է 12.636.762 հատ, իսկ տարեվերջի մնացորդը՝ 5.205.916 հատ (163.465.762 հազ. դրամ), որը կազմում է մոտ 5 ամսվա ծախսը:

- *Ինսուլին միջին ազդեցության 100 ՄՄ, 10 մլ դեղի* համար 2018 թվականի տարեսկզբին ունենալով 62.674 հատի մնացորդ կնքվել է 160.000 հատի պայմանագիր, փաստացի ծախսը կազմել է 139.669 հատ՝ որից տարեվերջի մնացորդը կազմել է 83.005 հատ (160,033.6 հազ. դրամ)՝ հաջորդ տարվա համար ապահովելով մոտ 7.1 ամսվա պահուստ:

- *Ինսուլին 30/70 կարճափուլ/միջին ազդեցության խառնուրդ 100 ՄՄ, 10 մլ 2018 թ.* տարեսկզբին ունենալով 7.498 հատի մնացորդ կնքվել է 25.000 հատի պայմանագիր, ծախսվել է 21.361 հատ, իսկ տարեվերջի մնացորդը կազմել է 11.137 հատ (21.472.1 հազ. դրամ)՝ հաջորդ տարվա համար ապահովելով շուրջ 6.3 ամսվա պահուստ:

- *Ինսուլին լիզարոն ներարկման լուծույթ 100 ՄՄ, 3 մլ դեղի* մեծաքանակ մնացորդը՝ 37.426 հատի չափով հաշվի չի առնվել, 2018 թվականին՝ պայմանագրով գնվել է 34.877 հատ դեղ, փաստացի ծախսը կազմել է 33.675 հատ՝ տարեվերջին առաջացնելով 38.628 հատի կամ 191.154.5 հազ. դրամի մնացորդ (13.8 ամիս):

- *Դեսմոպրեսին քթակաթիլներ 0.1 մգ/մլ դեղի* համար տարեսկզբին ունենալով 2.169 հատ մնացորդ՝ պահանջարկը 2018 թվականին ներկայացվել է 6.765 հատ, գնվել է 3.270 հատ, փաստացի ծախսը կազմել է 3.855 հատ՝ տարեվերջին առաջացնելով 1,584 հատի կամ 7,443.2 հազ. դրամի մնացորդ (4.93 ամիս):

### **Հաշվերնության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

*Ինսուլինային անալոգների մնացորդները նախատեսվում է ծախսել հաջորդ ամբողջ տարվա ընթացքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինսուլինային անալոգների գնումը կատարվել է ոչ թե 2015 թվականի առաջին եռամսյակում ինչպես սովորաբար, այլ ինսուլինի յուրաքանչյուր չափաքանակը ձեռք է բերվել տարվա 2-րդ կիսամյակում՝ հաջորդ ծրագրային տարվա համար: Փաստացի ստացվում է, որ ի տարբերություն օրացույցային տարվա ծրագրային տարին դիտարկվում է նոյեմբերից մինչև հաջորդ տարվա նոյեմբերը, ներառյալ 3 ամսվա պաշարը:*

*Համապատասխան հավելվածում, «պաշարների սպառման ժամկետ» աղյուսակում ամիսների հաշվարկի համար վերցվել է ընթացիկ տարվա փաստացի ծախսերը, առանց հաշվի առնելու պլանավորվող տարվա ընթացքում հիվանդների թվի աճը և դեղերի քանակներ ծախսերի ավելացումը, որը կազմում է շուրջ 10%:*

**Հաշվարկները ցույց են տվել, որ միայն հակադիաբետիկ դեղերի մասով 2018 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված 1.404.912.4 հազ. դրամի գնումներից տարեվերջի մնացորդը կազմել է 886,002.1 հազ. դրամ (63.1 %-ը):**

➤ 2018 թվականին Նախարարության կողմից ձեռք է բերվել մեթադոն 10մգ և 40մգ՝ 170,000 հատ դեղ՝ 32,356.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Տվյալ դեղը չի ծախսվել և հաշվառվել է որպես մնացորդ: Արդյունքում, Նախարարության կողմից 2018 թվականին

հատկացված բյուջետային միջոցների տնտեսման փոխարեն, կատարվել են ծախսեր՝ 2019 թվականի համար նախատեսված դեղորայքի գնման նպատակով:

### **Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված 500 հիվանդի հաշվով 10մգ և 40մգ մեթադոնի տարեկան պահանջարկի գնահատված արժեքը կազմում է շուրջ 153.600,00 հազ. ՀՀ դրամ, որը ձեռք է բերվում ինչպես պետական, այնպես էլ Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի միջոցներով: Չծախսված 32.356,00 հազ. ՀՀ դրամի մեթադոն 10մգ և 40մգ դեղամիջոցները նախատեսված է եղել որպես պահուստային քանակ հաջորդ տարվա համար:

➤ Կենտրոնացված կարգով ձեռք բերված բոլոր դեղերի մասով 2018 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված 2,111,172.2 հազ. դրամի գնումներից տարեվերջի մնացորդը կազմել է 1,228,418.7 հազ. դրամ (58.2 %-ը), (հավելված 3):

➤ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ առողջապահության նախարարությունում իրականացված 2017 թվականի վերահսկողության արդյունքներով նախարարությանը առաջարկվել էր՝ «բարձրացնել գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների պատասխանատվությունը կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի պահանջարկի և հիվանդների թվի հաշվարկման նկատմամբ, վերանայել ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանի դրույթները՝ կապված դեղորայքի քանակների որոշման մոտեցումների արդիականացման, առկա թերությունների վերացման հետ», ինչպես նաև «միջոցներ ձեռնարկել կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի շահառուների թվաքանակի ճշգրտման, հաշվառման բարելավման և դեղերը ստացող ԲԿ-ների կողմից նրանց վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների հավաստիության բարձրացման ուղղությամբ: Վերլուծել գնվող դեղորայքի գծով տարեվերջի մնացորդների առաջացման պատճառները, մշակել միջոցառումներ դրանց վերացման և այդ նպատակով կատարվող բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ»:

### **Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

1. 2019 թվականի մայիսի 30-ին թիվ 642-Ն որոշմամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, կենտրոնացված կարգով, իրականացվում է դեղերի ձեռքբերում՝ նախատեսված 15 ամիսների համար:

2. Լրամշակման փուլում է գտնվում ՀՀ առողջապահության նախարարի 18.04.2014թ. թիվ 837-Ա հրամանը:

3. 2019 թվականին ՀՀ ԱՆ ՄՕՀԿ-մ ներդրման փուլում է գտնվում «Դեղերի լոգիստիկ պահեստ» ծրագիրը, որը կապահովի դեղերի և ԲՆԱ սրացման և առաքման փաստաթղթերի

շարժը, ինչպես նաև կենտրոնացված և որպես մարդասիրական օգնություն ստացված ՀՀ ԱՆ ՄՕՀ-ում և բժշկական հաստատություններում առկա դեղերի և ԲՆԱ-ի շարժը:

### III. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՆՎԱԾ ԴԵՂԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն 03.12.2018 թվականի թիվ 101/104.4.1/7966-18, 26.11.2018 թվականի թիվ 01/8978-18 և 09.11.2018 թվականի թիվ 01/10.2/4590-18 գրությունների տեղեկատվություն է ստացվել ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերից կենտրոնացված և մարդասիրական օգնության կարգով ձեռք բերված դեղերի՝ բնակչությանը հասկացված դեղորայքի բաշխման ցուցակների վերաբերյալ: Առանձնացվել են դեղորայք ստացած մարդկանց անուններ և ուղարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ ճշտելու այդ մարդկանց երկրում գտնվելու կամ երկրից բացակայելու փաստերը: ԱԱԾ-ից ստացված տեղեկատվությունը համադրելով մարզերից ստացված դեղորայքի բաշխման ցուցակների տեղեկատվության հետ պարզվեց, որ Շիրակի մարզում 16 բնակիչ (64 անգամ), Լոռվա մարզում 11 բնակիչ (30 անգամ) և Արագածոտնի մարզում 1 բնակիչ (1 դեպք), ստացել են դեղորայք՝ չգտնվելով ՀՀ-ում:

## IV. ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. Ընդհանուր մաս

**2018 թվականին** ՀՀ պետական բյուջեով ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրվել է 1,825.2 մլն դրամ՝ պատվաստանյութեր և պատվաստանյութերի օժանդակ պարագաներ ձեռք բերելու համար: 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 799-Ն և նույն թվականի օգոստոսի 9-ի թիվ 951-Ն կառավարության որոշումներով ՀՎԿԱԿ-ին (Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն) պահուստային ֆոնդից տրամադրվել է 344,807.2 հազ. դրամ /unicef-ից պատվաստանյութեր է գնել/ և 28 710.0 հազ. դրամ /Ռուսաստանի Դաշնության Միկրոգեն ընկերությունից պատվաստանյութ է գնել է 1 դոզան 104.7 ռուբլիով/: 2018 թվականին նոյեմբերի 8-ի թիվ 1256-N որոշմամբ 158,800.0 հազ. դրամ ծրագրային գումարից իրականացվել է վերաբաշխում հիվանդանոցային ծրագրերին, իսկ 55,166.1 հազ դրամը պակասեցվել է 2018 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՀ ֆինանսների նախարարություն ծանուցմամբ: Արդյունքում ծրագրի ճշտված պլանը կազմել է 1,237.8 մլն դրամ, իսկ փաստացի ծախսը 1,236.9 մլն. դրամ:

### 2. Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ

#### Պլանավորում

#### 1. Գրիպի պատվաստանյութ

**Հանրապետությունում մոտ 1 ամիս գրիպի պատվաստանյութ պատվաստանյութ չի եղել**

14.09.2018 թվականի (ՀՀ առողջապահության նախարարի 10.09.18 թ. թիվ 2311-Ա հրամանի համաձայն իրականացված իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում ձեռք բերված և պահեստավորված պատվաստանյութերի քանակների դիտարկման արդյունքներից) դրությամբ ՀՎԿԱԿ պահեստում գրիպի պատվաստանյութ չի եղել, Երևանի և մարզային հիմնարկներում՝ ընդամենը 10 դոզա: 13.11.2018թ. Sanofi Paster-ից գնվել է 60000 դոզա: Հարկ է նշել, որ միջին ամսեկան ծախսը կազմել է 9167 դոզա: Հայաստանի Հանրապետությունում մոտ 1 ամիս գրիպի պատվաստանյութ չի եղել:

#### 2. Հնգավալենտ/ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում, հեմոֆիլիա Բ վարակ, հեպատիտ Բ / պատվաստանյութ

14.09.2018թ. ՀՎԿԱԿ-ում մնացորդը կազմել է 153799 դոզա, 10.10.2018թ.-ին գնվել է ևս 30000 դոզա, միջին ամսեկան ծախսը կազմել է 13032 դոզա: Այսինքն, պատվաստանյութը կբավարարի մինչև 2019 թվականի հոկտեմբեր ամիսը: 25.12.2018թ. ԱՆ-ն գնել է 74000 դոզա վեցավալենտ 1,148.5 մլն դրամի պատվաստանյութ (07.11.2018թ.

տրվել է կանխավճար): Հարկ է նշել, որ վեցավալենտը փուլային փոխարինելու է հնգավալենտին և ինակտիվացված պոլիոմելիտի և բերանային պատվաստանյութերին /ինակտիվացված պոլիոմելիտի պատվաստանյութը տրամադրվում է ԳԱՎԻ-ի (Պատվաստանյութերի և պատվաստումների գլոբալ դաշինք) կողմից/: Գնված վեցավալենտը կօգտագործվի մոտ մեկ տարի հետո: 64980 դոլարի պիտանելիության ժամկետը մինչև 31.07.2020 թվականն է, 9020-ինը՝ 31.05.2020 թվականը: Հարկ է նշել, որ ինակտիվացված պոլիոմելիտի պատվաստանյութը 14.09.2018թ. եղել է 19279 դոլա, որից՝ ՀՎԿԱԿ-ում 13794, Երևանում և մարզերում՝ 5475 դոլա, միջին ամսեկան ծախսը՝ 3672 դոլա: Հետևաբար 2019թ. հունվարին կվերջանա պատվաստանյութը:

### **3. ԿԿԽ /կարմրուկ, կարմրախտ, խոզուկ / պատվաստանյութ**

14.09.2018թ. դրությամբ պատվաստանյութի մնացորդը կազմել է 103796 դոլա, որից Երևան և մարզեր 13202 դոլա, ՀՎԿԱԿ 90594 դոլա, միջին ամսեկան ծախսը կազմել է 7906 դոլա: 02.11.2018 թվականին մատակարարվել է 48000 դոլա,  $103796+48000=151796$ , որը բավարար է 19 ամիս՝ մինչև 31.03.2020թ.:

### **4. Հակակատաղության պատվաստանյութ**

14.09.2018թ. դրությամբ մնացորդը կազմել է 1350 դոլա, որից Երևանում և մարզերում՝ 1315, ՀՎԿԱԿ-ում՝ 35 դոլա: Միջին ամսեկան ծախսը կազմել է 484 դոլա և նոյեմբեր ամսին այս պատվաստանյութը ՀՀ-ում վերջացել է: Պատվաստանյութը ստացվել է 23.12.2018 թվականին:

### **5. Հեպատիտ Բ /մանկական/ պատվաստանյութ**

14.09.2018թ. դրությամբ եղել է 76610 դոլա, որից ՀՎԿԱԿ-ում՝ 70360 դոլա, իսկ Երևանում և մարզերում՝ 6250 դոլա: Միջին ամսեկան ծախսը կազմել է 3699 դոլա, հետևաբար այն կբավարարեր մինչև 21 ամիս (մինչև 05.2020թ.), սակայն 02.11.2018 թ-ին գնվել է ևս 20000 դոլա: Հարկ է նշել, որ 23230 դոլա պատվաստանյութը ժամկետանց դառնալու ռիսկ ունի, քանի որ օգտագործման ժամկետը 23.09.2019 թվականն է, իսկ հաշվարկը ցույց է տալիս, որ 14.09.2018 թվականից հաշված այս պատվաստանյութից կծախսվի 44388 դոլա: Անհասկանալի է դառնում ևս 20000 դոլա գնելու փաստը, որը մատակարարվել է 02.11. 2018 թ.-ին:

Հարկ է նշել, որ պատվաստումը կատարվում է ծնվելուց հետո 24 ժամվա ընթացքում 1 դոլա: Ծնունդների թիվը 2016 և 2017 թվականներին եղել է համապատասխանաբար 40592 և 37700 / վիճ. ծառայություն/, սակայն 2017 թվականին ծախսվել է 46723 դոլա պատվաստանյութ: Պատվաստանյութի մնացորդը 01.01.2017 թվականին եղել է 40139 դոլա, 2017 –ին գնվել է 65000 դոլա, որից 30000 դոլան 20000 հեպատիտ Բ մեծերի պատվաստանյութի փոխարեն: Մնացորդ 01.01.2018 թվականին կազմել է 58416 դոլա: 2018 թվականին գնվել է ևս 62500 դոլա:

### **6. Հեպատիտ Բ /մեծերի/ պատվաստանյութ**

Պատվաստանյութերի ազգային օրացույցի համաձայն ռիսկի խմբերը պետք է պատվաստվեն ըստ հրահանգի, սակայն 2017 , 2018 թվականներին պատվաստանյութ չի գնվել:

### **8. Պոլիոմելիտի դեմ պատվաստանյութ**

14.09.2018թ. դրությամբ մնացորդը կազմել է 283350 դոզա, որից ՀՎԿԱԿ-ում՝ 261410, իսկ Երևանում և մարզերում՝ 16469 դոզա, հետևաբար կբավարարի 17 ամիս, սակայն գնվել է ևս 30000 դոզա/մատակարարվել է 10.10.2018թ./ , որը կբավարարի 19 ամիս (մինչև 31.03.2020թ.)

### **9. Պապիլոմային վիրուսի դեմ պատվաստանյութ/Gardasil, /**

Մարդու պապիլոմավիրուսի դեմ պատվաստանյութը տրամադրվել է ԳԱՎԻ-ի (Պատվաստանյութերի և պատվաստումների գլոբալ դաշինք) կողմից, որպես մարդասիրական օգնություն: 14.09.2018թ. դրությամբ մնացորդը կազմել է 61903 դոզա, ՀՎԿԱԿ-ում՝ 53661, Երևանում և մարզերում՝ 8742 դոզա , միջին ամսեկան ծախսը կազմել է 576 դոզա, հետևաբար պաշարը կբավականացնի 107 ամիս , սակայն պահպանման ժամկետը մինչև 10.12.2019 թվականն է:

***Տվյալ տարվա պատվաստանյութերի գնման համար նախատեսված ծախսերի հաշվին գնվել են իրական պահանջարկը գերազանցող քանակությամբ պատվաստանյութեր, որոնք բավարարել են նաև հաջորդ տարվա որոշակի քանակության պահանջարկը և որոնց համար պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել են միջոցներ: Արդյունքում, գնված պատվաստանյութերի բաշխումից հետո տարեվերջին առաջացել են պատվաստանյութերի մնացորդներ /հավելված 5/:***

## **Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված պարզաբանում**

### **1. Գրիպի պատվաստանյութ**

Սեզոնային գրիպի պատվաստանյութը պլանավորվում է միայն ռիսկի խմբերի համար /6 ամսականից մինչև 5 տարեկան ազգաբնակչություն, փակ կոլեկտիվներում գտնվող անձինք՝ մանկատան սաներ և սպասարկող անձնակազմ, դպրոց-ինտերնատների աշակերտներ և սպասարկող անձնակազմ), հղիների, քրոնիկ հիվանդների (շնչառական և սիրտ-անոթային համակարգերի, շաքարային դիաբետով, լյարդի, երիկամների քրոնիկ հիվանդություններով հիվանդներ), 65 տարեկանից բարձր տարիքի անձանց, բուժաշխատողների, զորակոչի ենթակա անձանց, տարեցների և հաշմանդամների խնամքի կազմակերպություններում, հոգեկան առողջության կենտրոններում գտնվող անձանց և սպասարկող անձնակազմի/ : Նախատեսվում է պատվաստումները սկսել սեզոնային բարձրացումներից առաջ և ավարտել մինչև սեզոնային բարձրացումների պիկերը՝ նպատակ հետապնդելով բնակչության առավել խոցելի խմբերին պաշտպանել ծանր առողջական խնդիրներից: ՀՀ-ում գրիպի սեզոնը սկսվում է ընթացիկ տարվա հոկտեմբերից և շարունակվում է մինչև հաջորդ տարվա մայիսը՝ հիվանդության պիկը գրանցվում է դեկտեմբեր-փետրվար ամիսներին: Հայաստանը փոքր շուկա է և արտադրողները գերադասում

են առաջնահերթ մատակարարել ավելի մեծ պահանջարկ ունեցող երկրներին: Այդ իսկ պարճառով Հայաստանը միշտ պատվաստումները սկսում է նոյեմբերից ոչ շուտ: Սակայն Հայաստանում գրիպի պատվաստումների պահանջարկը շատ բարձր է և պատվաստումներն ավարտվում են հիմնականում մինչև հունվարը, սակայն եզակի դիմողներին մնացորդային քանակներով պատվաստումները շարունակվում են մինչև մարտ ամիսը: Պատվաստանյութի ընդհանուր պիտանելիության ժամկետը մեկ տարի է և յուրաքանչյուր տարի փոխվում է պատվաստանյութի բաղադրությունը՝ համաձայն ԱՀԿ-ի հանձնարարության(հղում՝ <https://www.who.int/influenza/vaccines/virus/recommendations/en/>): Հետևաբար՝ նպատակահարմար չէ մեծ քանակներով ձեռքբերումը՝ աննպատակ խտրանից խուսափելու նպատակով:

**2. Հնգավալենտ /դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում, հեմոֆիլուսային Բ փիպի վարակ, հեպատիտ Բ/ պատվաստանյութ.**

Բոլոր պատվաստանյութերի պահանջարկը հաշվարկվում է ընթացիկ տարվա հունիսից մինչև հաջորդ տարվա հունիս ժամանակահատվածի համար, ավելացված 25 տոկոս պահուստ: Մինչդեռ ուսումնասիրության արձանագրությամբ դիտարկվել է մինչև 2018 թվականի դեկտեմբերի վերջը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2012թ. մայիսին 65-րդ համաժողովում ընդունված որոշման համաձայն նախատեսվում է մինչև 2020 թվականն ապահովել «Աշխարհն առանց պոլիոմիելիտի» կարգավիճակը, որի շրջանակներում երկրները, /այդ թվում նաև՝ Հայաստանը/ 2018 թվականից սկսած աստիճանաբար դադարեցնում են պոլիոմիելիտի կենդանի պատվաստանյութի կիրառումը՝ այն աստիճանաբար փոխարինելով պոլիոմիելիտի ինակտիվացված պատվաստանյութով (հղում՝ [http://apps.who.int/gb/dgnp/pdf\\_files/a65\\_recl-en.pdf](http://apps.who.int/gb/dgnp/pdf_files/a65_recl-en.pdf)):

Զարգացած երկրներում, ինչպես նաև հետխորհրդային մի շարք երկրներում /Վրաստանում, Մերձբայթյան հանրապետություններում/, այս հարցը լուծվել է հնգավալենտ պատվաստանյութը փոխարինելով վեցավալենտով, որի բաղադրության մեջ մտնում է նաև ինակտիվացված պոլիոմիելիտի պատվաստանյութը՝ հաշվի առնելով հեքսավալենտի մի շարք առավելությունները, մասնավորապես.

-Երեխային ներարկվող պատվաստումների թվի նվազում /հոգեբանական գործոնի բացառում/:

-Հետպատվաստումային ռեակցիաների թվի կրճատում /տեղային, ընդհանուր/ անվտանգ պատվաստումային ծառայություններ:

-Սառցային շղթայի բեռնվածության կրճատում և պատվաստանյութերի անվտանգության ապահովում:

-Պատվաստումների պլանավորման բարելավում /հայտեր, հաշվեկալություններ, գրանցումներ, երեխաների հրավիրում/:

Նախատեսվել է փուլային անցում՝ 2019 թվականին՝ 1 դեղաչափ, 2020 թվականից մնացած դեղաչափերը: 2019 թվականի փետրվարի 1-ից 18 ամսական երեխաների համար նախատեսված հնգավալենտն արդեն փոխվել է վեցավալենտով: Ինչ վերաբերվում է ինակտիվացված պոլիոմիելիտին, ապա 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա քանակությունը 6435 դեղաչափ է: Հարկ է նշել, որ այս պատվաստանյութը երբեք ձեռք չի բերվել պետական բյուջեի միջոցներով: Այն տրամադրվել է ԳԱՎԻ կազմակերպության կողմից: 2019 թվականին /փետրվարին/ ներկրվել է 55080 դեղաչափ, դարձյալ ԳԱՎԻ կազմակերպության օգնությամբ:

**3. ԿԿԻ /կարմրուկ, կարմրախտ, խոզուկ/ պատվաստանյութ**

Կարմրուկի և կարմրախտի առումով Հայաստանը համարվում է տեղական դեպքերը վերացրած երկիր /ունի էլիմինացված կարգավիճակ, հղում՝ ԱՀԿ տարածաշրջանային սերտիֆիկացնող հանձնաժողովի եզրակացության [http://www.euro.who.int/data/assets/pdf\\_file/0019/401257/ARM-RUS.pdf?ua=1/](http://www.euro.who.int/data/assets/pdf_file/0019/401257/ARM-RUS.pdf?ua=1/):

Էլիմինացված կարգավիճակի պահպանման համար երկրում պարտադիր պետք է ապահովվի պահուստային մշտական պաշար՝ հնարավոր բռնկումներին արագ արձագանքելու

համար: Սա ոչ միայն կարմրուկին է վերաբերվում, այլ ցանկացած պարվաստանյութի, քանի որ պարվաստանյութի արտադրական շրջափուլն ավելի երկար է /մոտ 8 ամիս/ և համաշխարհային շուկայում պահանջարկը մեծ է: Հաշվի առնելով 2013 թվականից Հայաստանին հարևան Վրաստանում և մի շարք եվրոպական երկրներում կարմրուկի լարված համաճարակային իրավիճակը և բռնկումների անընդհատ ծագումը /Վրաստան 2013թ-ին՝ մոտ 15,000 հիվանդացման դեպք, 2018-2019 թվականներին մոտ 5000 դեպք, Ուկրաինայում՝ 2018-ից մինչև այսօր մոտ 55,000 դեպք, Իտալիայում, Գերմանիայում և այլուր անհանգիստ իրավիճակը/ (հղում՝ <http://www.euro.who.int/en/health-topics/disease-prevention/vaccines-and-immunization/publications/surveillance-and-data/measles-and-rubella-elimination-country-profiles/2019>) Հայաստանում մշտապես արագ արձագանքման անհրաժեշտությունը կա: Այսպես 2019 թվականի անցած ամիսների ընթացքում Հայաստանում գրանցվել է կարմրուկի բերովի 5 դեպք, որի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարի 25.12.2018թ. թիվ 3377 հրամանով իրականացվել են լրացուցիչ պարվաստումներ մինչև 30 տարեկան անձանց շրջանում: Միաժամանակ հարկ է նշել, որ մինչև 2019 թվականի ամառային զորակոչը ԿԿԽ պարվաստումները կատարվել են 3 տարիքային խմբում՝ 1 և 6 տարեկաններ, ինչպես նաև նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք: Իսկ 2019 թվականից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք ԿԿԽ-ով կպարվաստվեն միայն 2 դեղաչափի չունեցողները: 2019 թվականի պահանջարկը համապատասխանաբար նվազեցվել է 52,000 դեղաչափի:

**4. Հակակատարադոսիայի պարվաստանյութ**

Հակակատարադոսիայի պարվաստանյութի անբավարար քանակության խնդիրը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի մրցույթի չկայացումն էր: Պարվաստանյութերի գլոբալ շուկայում դիտվել է հակակատարադոսիայի պարվաստանյութի անբավարարություն և այդ պարագայում Հայաստանին, որպես փոքր շուկա, առաջնահերթություն չի տրվել:

2019 թվականին լրացուցիչ ներկրվել է 15,000 դեղաչափ:

**5. Հեպատիտ Բ /մանկական/ պարվաստանյութ**

Վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ պարվաստումներն իրականացվում են ոչ միայն նորածիններին, այլ նաև ռիսկի խմբերի շրջանում /բուժաշխատողներ, ուլքեր մասնագիտական գործունեության հետ կապված, շփվում են արյան և դրա բաղադրամասերի հետ, պարբերաբար արյան պատրաստուկներ ստացող, ինչպես նաև հեմոդիալիզի ենթակա անձինք, լյարդի քրոնիկ հիվանդություններ ունեցող, ուռուցքա-արյունաբանական, ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդներ, հեպատիտ Բ-ով հիվանդների ընտանիքների անդամներ և այլն/: Վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ մանկական պարվաստանյութը ձեռք է բերվում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջոցով զգալի ցածր գնով: Իսկ մեծահասակների համար չի մատակարարվում, քանի որ հիմնադրամը մանկական է: Մեծահասակների և մանկական պարվաստանյութերը նույնն են, միայն կիրառվող դեղաչափն է տարբեր: Երեխաների համար նախատեսված է 0.5մլ դեղաչափ, իսկ մեծահասակների համար՝ 1մլ, այսինքն՝ օգտագործվում է երկու մանկական դեղաչափ /1 մլ=2 \* 0.5մլ/: Հիմք ընդունելով վերոհիշյալը, ձեռք է բերվել հեպատիտ Բ-ի դեմ մանկական պարվաստանյութի լրացուցիչ քանակություն ռիսկի խմբերի պարվաստումների իրականացման համար:

**6. Հեպատիտ Բ /մեծահասակ/ պարվաստանյութ**

Կետ 5-ի պարզաբանումը:

**7. Պոլիոմիելիտի դեմ պարվաստանյութ**

